

սումեարանի վերաբերութեամբ՝ Աւարդանեանցի սրտին այն միայն և եթ անփարատելի ցաւ եղաւ, որ դեռ ևս նոյն գպրոցի բացման հրամանը Ա. Եհական ամայական չափացած՝ մահը վրայ հասաւ, և յափշտակեց այնպիսի անզուզական Հօր մը — ազգային վեհ բարերարի մը պատուական և փառաւոր կեանքը, որդյ քաջալերական և օրհնառաք կոնդակներով, հայրական ցոյցերով՝ ամեն ժամ կը միմիմարուէր և կարիանայր՝ ևս քան զես հետեւիլ և միջամուխ լինել ազգասիրական գործքերու. Նա մանաւանդ և կատարելով Կորին Վ. Եհակառութեան բարի բարի առաջարկութիւններն, որք կ'վերաբերեին ազգային բարոյական այլ և այլ հաստատութեանց.

Ա. Բ. Ա. Յ.

* Եերկայ Մեծի պահոց օրիբում ժողովրդեանը Ա. Եւետարանի խրատներով և քարոզներով հոգեորապէս միսիմարելու համար նշանակուեցան Ա. Էջմիածնայ Տաճարի մէջ քարոզողներ — կիւրակէի երեկուահան Գեր. Սերովը Եպիսկոպոս Երարատեանց, բ. կիւրակէի Գեր. Մեսրովը Եպիսկոպոս Սմբատեանց, բ. կիւրակէի Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Ըղափիրեանց, բ. կիւրակէի Գեր. Երեմիա Եպիսկոպոս Գալլուտեան, բ. կիւրակէի Բարեշն. Աիւրեղ Աւարդապետ Սրապեան և Ա. կիւրակէի բարեշն. Սարգիս Աւարդապետ Տ. Գասպարեան.

Բաց յայսմանէ բարեշն. Աիւրեղ Աւարդապետն ամենայն շաբաթ երեկոյեան քարոզումէ և Սամաղար զիւղի եկեղեցում. իսկ բարեշն. Սահակ Աւարդապետ Բաղդասարեանց Մեծի պահոց ամենայն կիւրակէ առաւտեան պիտի քարոզէ Աւարդապետայ Եկեղեցում մինչեւ Ա. Յարութեան օրը.

* Ազբիւր « ամսագրի մէջ տպուած հայ լրագրների, շաբաթաթերթերի և ամսաթերթերի յայտարարութեանց շաբթում տպուած էր և Ա. Էջմիածնում հրատարակուող « Արարատ » ամսագրի յայտարարութիւնը, որի մէջ սպրդած էր մի սխալ և որը հարկ ենք համարում ուղղել, այն է՝ տարեկան բաժեանորդագինը փոխանակ չեւ (4) բուրլու՝ նշանակուած է Երեւ (3) բուրլի».

Ա. Յ. Ե. Ա. Յ. Բ.

Անդրեաբեր հորդէւ. Ա. Երջին ժամանակներս Ամերիկայում գտնուեցաւ արուեստական անձրև բերելու եղանակը. Գա այսպէս է լինում. — առ-

նում են օդապտրիկ, որի մակոյկը լցնում են պայթող փամիշտիկներով, որոնք մետաղեայ թելերով միացած են այն պարանի հետ, որով պահպանուումէ օդապտրիկը։ Այս պարանը միևնոյն ժամանակ կատարումէ երկրի վերայ գրուած ելեքտրական մարտկոցի հաղորդողի (պրո-
վունիկ) գերլ։ Գունզը լցնում են գաղով և բաց են թողնում։ Երբ նա
ամպերի բարձրութեանն է հասնում, այն ժամանակ, այն մարդը որ
մարտկոցն է կառավարում, պարպումէ մարտկոցը. պայթող փամիշ-
տիկները կրակուումնեն. առաջանումէ պայթումն. ամպին հաղորդ-
գումէ արագ շարժողութիւն և նա թափվումէ երկրի վերայ իրեն անձ-
րեւ։ Գոնէ այսպէս է ենթագրում հնարողը։ Ենթագրութիւնների
ճշմարտութիւնը այս տարուայ դարնան և ամսուուան կատարուելիք
փորձերը ցոյց կտան։

ԱՐԵՒ ՀԱՅՈՒՄԸ 1883 թուի Մայիսի 6 ին տեղի պիտի ունենայ արեւ
ամրողական խաւարումը. այս խաւարման անսովորական երկարատեւ-
ութեան շնորհիւ (մօտ կէս ժամ) կարելի պիտի լինի մի կողմից—ա-
րեւի աւելի ճիշտ հետազոտութիւնը իսկ միւս կողմից էլ Լիվերբոյի
ենթագրութեան ճշմարտութիւնը ստուգել, որը կարծում է թէ Փայլա-
ծուի (մէրկուրի) միւս կողմը մոլորակներ են դանուում. Խաւարումը
ամբողջ հարաւային կիսագնդում պիտի երեխ։

ԵՐԵՒ ՌԵ ԴԻՆԻ ԵՐԵՎՐ ԲՆ ԱՊՐԻԼԻ Կեանքի երկարատեւութիւնը ամենից
աւելի հասնում է Յունաստանում։ Աթէնքում 1876 ին մեռել են 7
հոգի 80—112 տարեկան. իսկ 1878 ին Փետրուարից մինչև Հոկտեմբեր
ամիսները, ինչպէս նկատել է յունական բանակի զիստաոր բժիշկը, 9
հոգի որոնցից երկուոր՝ 75 տարեկան, իսկ միւսները 80, 95, 100, 112,
120 տարեկան։ Նոյն բժշկին պատահել է 1758 ին ծնուած և 1797 ին
կրօնաւորական կարգ ընդունով մի քահանայ, որը մեռել է իւր ծխին 81
տարի հավաութիւն անելուց յիշոյ. նա մինչև կեանքի վերջի օրերը
ամեննին չէ հիւանդացել, և չնայելով իւր 120 տարեկան հասակին,
ինքն էր մշակում իւր հողը։

ՏԵՐԵՎԵՐԻ ՀԻՆԿ ՔԵՐԵՎԱՆՆԵՐԸ Մօտ օրերումն Խոալիայի քաղաքներից
մինում մեռաւ մի զիւղացու 9 րդ ամսին յղացած 27 տարեկան կինը.
և որովհետեւ մարդը յաճախ ծեծում է եղել իւր կնոջը, այդ պատճա-
ռով մարդը իւր վրայ կասկած յարդյունուց յետոյ քննիչի հետ բժիշկը գնում է գերեզման. գագաղի բացուելուց յետոյ
տեսնում են կնոջ երեսի վրայ սարսափելի տանջանքի նշաններ. —

շրթունքների վրայ չօրացել է արինը, լեզուն առամների մէջ չօրացած, անդամներն ու ձեռքերը քոշուել են (скорчены), իսկ սոների տակին դտել է կանոնաւոր զարգացած, բայց մեռած մանկանը, քննութիւնից երեսց' որ անբազգ մայրը դադաղի մէջ էր ծնել, և որ ծնունդից յետոյ էլի մի քանի ժամ ապրել է. սրանից եզրակացրին որ՝ ուշըմն կինը կենդանի էր թաղուած՝ մեռած կարծուելով։

Նոր ուժութիւնուն նույնած. Նորերս և la nature լրագրի մէջ տպուած էր քիմիկոս պ. Ա. իդմանից առ պ. Գաստոն Տիսանդ'յէ ուղղուած նամակը. որին կից էր և սիմպատիկան թանաքի բէցէպտը. Այդ թանաքով գրուածքը պէտք է նախ ջրի մէջ թրջել որ կարգացուի. և կարգացուում է՝ քանի թաց է. իսկ չորանալով անյայտանում է և զիրը Ահա բաղադրութիւնը.—սովորական կանէփի իւղ 1 մասն. նշաղիը (alcali volatile) 20 մասն. ջուր 100 մասն. այս բոլորը պէտք է իրար հետ լաւ խառնել։

Եվխորակուն նույնի. Այս մօտերս Լօնգոնում Տէմզա գէտի վրա շատ հետաքրքիր փորձ արեցին ելեկտրականութիւնը իրքեւ շարժող ոյժ գործածելով ջրի վրայ. Մի փաքը նոււակ չորս հոգը ովկա առանց թիավարելու, առանց մի բանի Տէմզայի վրայով քամուն և հոսանքին հակառակ՝ մի ժամու մէջ զնաց ահազին տարածութիւն Միլլէուլից — մինչի Լօնգոնեան կամուրջը. նաւակը ելեկտրականութեամբ էր շարժում, Կոկ շարժող զօրութիւնը բաղկացած է 45 ակումբուլիատօրներից, որոնք իրար հետ Սիմէնսի մեքենաներով են կազուածւ Փորձը շատ յաջող էր։

Պատույին Աղառնիները Նիւեօրկում և Պենսելվանիայում աւելի մեծ ծառայութիւն են մատուցանում. Նրանց պահում են գեղանոցներում, որտեղից շուտով լուր են տալիս բժիշկներին հիւանդների մասին և ընդհակառակից. այսպէսով բազմաթիւ մարդիկ անխուսափելի մահուանից ազատուել են։

Ա. Բ. Ա. Բ. Ա. Տ. Ա. Ա. Գ. Ե. Բ Աֆօնի յունական վանքերից մինում 94 տարեկան հաստկում մեռաւ մի վարդապետ, 68 տարին անցրել էր սա բոլորովին աշխարհից հեռացած — իսուցի մէջ. 1812 ին Աֆօնեան վանքերից մինում կրօնաւորների կարգը մտնելով, վանքը իրա համար անբաւական է համարում, և շուտով հեռանում է այդտեղից և փակուում է մի առանձնացեալ իսուց, այլ

և չելնելու նպատակով՝ միայն երեկոներն ու առաւօտները գնում է եղել վանք և ժամասացութիւնից յետոյ հացի և ջրի պաշտով վերադառնում իւր խուցը։ Այդ միջոցին նա նկարում է եղել Աստուածածնայ պատկերներ և միաբաններին ծախում։ իւր խնդրքի համաձայն նորա մարմինը թաղել են խուցի գուան մուտքում... Աանքի միաբաններից ամենածերերը պատմում են, որ իւրեանք ոչ մի ժամանակ ոչ տեսել և ոչ էլ լուել են՝ որ դրսից ոք մին եկած լինի նորա մօտ կամ աշխարհիցն մի որ և իցէ լուր առած լինի։

Դար աշխարհի հրաշալիք լիճը կանաչ լիճն է (green Lake). որ իւր զիրքով աշխարհիս ամենաբարձր լիճն է և 10,252 ոտք բարձրութիւն ունի ծովի մակերեսիցից. ջուրը պարզ է որպէս բիւրեղ. ժայռերի աչագին կոյտերը և քարացած անտառի մեացորդները պարզ երեսում են նորա յատակում. ծառերի տերենները, որոց մէջերում խաղում են գեղեցիկ ձկներ, կուրացուցիչ սպիտակ գոյն ունին, և կարծես թէ մարմարից լինին տաշած, շինած, Խորութիւնը 200 ոտք է։

Մըշտառներէ ուշտէ։ Ամերիկայում՝ Ալբերնեան սարերի միջում գտնուում է մըջիւնների մի ամբողջ քաղաք, որ կազմուած է մօտաւորապէս 1700 հատ՝ 2—5 ոտնաչափ բարձրութեամբ բրդաձև շինութիւններից, հողը ամենայն ուղղութեամբ փորուած է և ծածկուած բոյներով և բաժանուում է երկար փողոցների, որոց մէջ ամենայն օր խոնուում են քաղաքի ամբողջ բնակիչները։ Վերջիններս շատ խաղաղ են ապրում միեանց հետ, միայն երբեմնակի օտար մըջիւնի երեան գալը շփոթում է նոցա խաղաղութիւնը, որին նորա ընդհանուր ոյժերով դէմ են գնում...։

ՅՈՐԱԳԻՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԳԻ

Ե 24 Յունիվարի 1883 ամի. Ա. Սինօգս լստ խնդրանաց Անդամոյ Սորին գեր. Գրիգոր Եպիսկոպոսի Տ. Մատթէոսեան խնդրեալ է զանօրէնութիւն կառավարչի Գըլիակոր կառավարութեան վասն հայցելոյ զԲԱՐՁՐԱԳՈՅՑ լուծումն առ ի Մոյլատրելոյ նմա զիցամսնայ արժակուրդ յարտառահման ի զիւտ առողջութեան, առ որ եւ միջոցաւ Գիլութք կառավարութեան յայսկոյս կովկասու՛ ստացիալ է ԲԱՐՁՐԱԳՈՅՑ, կամօք զթոյքտութիւն, վաստրոյ հրամայեցիմ. — — ունկով ի նկասի զբանեւից-